

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Կրօնական եւ Աստուածաբանական

Թիի 8

ԶԱՏԻԿ ԿԻՐԱԿԷ,

24 ԱՊՐԻԼ, 1888

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ ԺԶ. 2—8

Եւ ընդ առաւօտս միաշարաթուն զան 'ի գերեզմանն ընդ արեւագալն, և ասէին ցմիմեանս. Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն 'ի դրաց գերեզմանին: Եւ հոյեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն 'ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն, տեսին երիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ զգեցեալ պատմութեան սպիտակ, և զարհուրեցան: Եւ նա տսէ ցնոսաւ. Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զնազովրեցի զխաչեալն, յարեալ՝ չէ աստ. ահաւաղիկ տեղին ուր եգին զնա: Այլ երթայք ասացէք ցաշակերտս նորա և ջղետրոս, եթէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս տուայն ձեզ: Եւ իբրեւ լուան՝ ելին և փախեան 'ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ տուային, զի երկընչէին:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԶԱՏԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հաղարաւոր տարիներ աշխարհս մի երկնային փրկչի կը սպասէր, մինչեւ մանուկ ծնաւ, եւ հրեղէն պատգամաբերն քարոզեց. Սա է որում ական կալարուք: Մանուկն աճեց եւ զօրացաւ եւ երբոր մեծացաւ՝ հրաշալի սքանչեւագործութեամբ իւր աստուածային պաշտօնն հռչակեց. եւ ամենեքեան որք ուղիղ էին սրտիւք՝ հաւատացին 'ի Նա յԱռաքեալն յԱստուծոյ: Միայն մեծամեծներն ու կեղծաւորներն զնա չընդունեցին, այլ հալածեցին եւ դատապարտեցին (եւ 'ի վերջոյ խաչեցին եւ սպանին զնա իբրեւ չարարար ոմն): ԶԹ՛նչ ապա: Ուրեմն այն բոլոր մարգարէութիւններն ու ականալութիւններն 'ի դերեւ ելին. այն բոլոր սքանչեւագործութիւններն զոր նա իբրեւ մարդ կը գործէր՝ խաբեբայութիւն ու խարդախութիւն էին, եւ Հրէայք որ զինքն հայհոյող, չար եւ ապստամբ կը կոչէին իրաւունք ունէին: Անշուշտ այս ամէնը այսպէս եղած կը լինէր եթէ նորա պատմութեան վերջն իւր նախատալից վախճանն լինէր: Բայց այս արիւնոուշտ գործն՝ նորա կենաց վերջն չէր, այլ ընդհակառակն իւր մահն գրեթէ իւր ծնունդն էր: Այս մահն, կանխատեսեալ եւ նախասահմանեալ յԱստուծոյ, փրկագործութեան մի մասն էր. սորան հետեւեց Յարութեան մեծագործութիւնն, որոյ յիշատակն այսօր կը տօնեմք: Գերեզմանն զնա չը պահեց. յարեաւ նա 'ի մեռելոց: Քրիստոսի մարդեղութեան նշանակութիւնն ու կարեւորութիւն մեծաւ մասամբ իւր յարութեան վերայ է հաստատեալ, եւ մեր բոլոր յոյսերն ու ականալութիւններն 'ի Քրիստոսէ իբրեւ յՈրդւոյն Աստուծոյ՝ այս իրողութեան վերայ են հիմնեալ:

1. Գերեզմանն զնա չը պահեց: Արդարեւ մեռաւ, քայց յաւուրն երրորդի վերսին յարեաւ 'ի մեռելոց: Եթէ մեր բոլոր հաւատն ու յոյսն առ Քրիստոս՝ նորա Յարութեան վերայ է հիմնեալ, ուրեմն պարտ է մեզ խորին մտօք համոզուինք այս ճշմարտութեան: Թէպէտ իբրեւ քրիստոնեայք պիտի համոզուած լինինք եւ անշուշտ համոզուած ենք, սա-

կայն եւ այնպէս մեզ համար միշտ սիրտիանք եւ խրախոյս է մեր համոզման պատճառներն յիշել եւ մտաբերել։ Ապա ուստի՞ գիտեմք կասարեալ հաստատութեանք որ Տէրն մեր ճշմարտապէս յարեալ 'ի մեռելոց։ Նախ խօսքն այն է, թէ արդեօք Յիսուս ճշմարտապէս մեռաւ, թէ միայն մեռնել կեղծեց։ Տես, նա այս բանն ինչպէս կ'ապացուցանէ։ Քրիստոս Հրէից կառավարութեան հրամանաւն կ'սպանուի 'ի ներկայութեան իւր թշնամեաց, եւ զինքն արդէն մեռած կը գտնեն երբ կուգան իւր չարարար չարչարակցաց սրունգներն ջախջախելու որպէս զի նորանց մահն փութացնեն։ այնու ամենայնիւ մի ոմն 'ի զինուորացն առանց հարկի խոցեց նորա կողն, որով իւր մահն հաստատուեց։ Իւր թշնամիք քաջ գիտեն որ նա մեռաւ եւ նորանց երկիւղն այն չէ որ միթէ նա դարձեալ կենդանանայ, այլ միթէ իւր աշակերտներն մարմինը գողանալով՝ նորա Յարութիւնն հռչակեն։ Նմանապէս իւր սիրելի բարեկամներն գիտեն հաւաստեալ թէ նա մեռաւ, քանզի նոքա իսկ պատեն եւ թաղեն զմարմին նորա։ Նոքա կը կոծեն եւ կ'արտասուեն, եւ յորժամ Մարիամ յաւուր երրորդի գերեզմանը դատարկ կը գտնէ, նորա վերստին կենդանութիւնն բողբոջին անհնար կը համարէ եւ արտասուելից ձայնիւ կը խօսի. « բարձին զՏէր 'ի գերեզմանէ », եւ կարծեցեալ պարտիզպանին կասէ. « եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ուր եղիր զնա »։ Եւ իրօք իւր ժամանակակիցներին անհնար էր չխոստովանիլ թէ նա ճշմարտապէս մեռաւ։ Այս պատճառաւ իւր թշնամիք ուրիշ բան չը կարողացան հնարել երբ նորա մարմինն այլ եւս գերեզմանին մէջ չը գտան քան թէ ասել, նորա աշակերտներն մարմինը գողացան։ Ապա եթէ Քրիստոս խկապէս մեռաւ եւ զմեզ իւր վերստին կենդանութենէն համոզած է, ուրեմն նախ քննենք թէ նորանց վկայութիւնն որք սորա ճշմարտութեան վկայք հանդիսացան՝ արժանահաւատ է, թէ արդեօք նոքա ղերծ էին 'ի պարանայ եւ խաբէութենէ։ Եթէ Քրիստոսի Յարութեան վկայք այնպիսի անձինք եղած լինէին որք մեղ բան տեսնէին ուր բան չը կար, կամ թէ այնպիսիք որք յառաջագոյն նորա Յարութեան կ'սպասէին եւ հետեւաբար դիւրին կը լինէր զնո-

սա խաբէլն, կամ թէ նոքա ոեւէ կերպիւ ցնորեալ կամ ան-
պատասխանի գրութեան մէջ լինէին երբ կը հռչակուէր կամ
նոքա կը կարծէին թէ զՔրիստոս կը տեսնեն վերստին կեն-
դանացեալ։ Սորանց ոչ մէկը Առաքելոց եւ Քրիստոսի Յա-
րութեան վկայից կը վերաբերի։ Նոքա բոլորովին անյոյս եւ
խորին ու անմխիթար տխրութեան մէջ էին եւ երբ որ նո-
րա մարմինը գերեզմանին մէջ չը գտան՝ չասացին թէ կեն-
դանացաւ, այլ կարծեցին որ մէկը գողացած պիտի լինի զայն.
եւ նորանց տեսութիւնն կենդանացելոյն հետ այնքան անպա-
տիւր էր, որ իւրեանց տեսածն անգամ չուզեցին հաւատալ մին-
չեւ նորա մարմինը չօջափեցին։ Նմանապէս մնացեալ մանրա-
մասնութիւններն. երբ եկան ի գերեզման ինչպէս տեսին երի-
տասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ, եւ թէ ինչպէս
տեսին զկտաւան զի կային անդ, եւ վարչամակն ուրոյն ծա-
ղեսլ ի մի կողմն, եւ թէ հրեշտակն ինչ խօսքեր խօսած է
նորանց հետ։ — Ոչ եւս կարող ենք ասել թէ մի անակնկալ
եւ յանկարծակի տեսլամբ՝ կարծեցին այնպիսի բաներ տես-
նել զորս իրօք ոչ տեսին։ Նախ գերեզմանը դատարկ կը
գտնեն. նախ պիտի ծաղեսլ կտաւներէն իմանան որ իւրեանց
վարդապետի մարմինն գողի կամ թշնամոյ աւար չի դարձել.
նախ պիտի հրեշտակներ նորա Յարութիւնն աւետեն։ Այս-
պէս նորանց առիթ ու ժամանակ կուտայ որ իւր վերստին
կենդանութեան վերայ յառաջագոյն մտածեն եւ յետոյ կա-
րողանան ճշմարտապէս տեսնել, շտեղ եւ յնոնել։ Տէրն մեր՝
իւր վկայները կը համոզէ որ իսկապէս կենդանի է նա. նա
կը խօսի որ նոքա լսեն. կը թողու որ զինքն չօջափեն եւ
տեսնեն որ կենդանի մարմին է. նորանց մօտ կ'ուտէ եւ կը
խմէ. իւր ձայնովն, խօսքովն, սովորութիւններովն բոլորո-
վին կը համոզէ զնոսա որ նա ինքն է իւրեանց Տէրն եւ վար-
դապետ որ երեք օրով յառաջ խաչեցաւ. ձեռների, ոտների
ու կողի վէրքերը բաւական ապացոյց էին առ այս։ — Քրիս-
տոս զինի իւր Յարութեան բազմիցս երեւեցաւ աշակերտաց
իւրոց. քառասուն օր իւր աշակերտաց հետ մի եւ նոյն ա-
ռարկայի վերայ կը խօսէ որպէս յառաջ, զարքայութենէ Աս-
տուծոյ. ոչ թէ միայն առանձին առանձին իւր աշակերտաց

կ'երեւէր, այլ բազմաց 'ի միասին, եւ 'ի վերջոյ զինքն 500ի միանգամայն յայտնեց եւ նորանց հետ խօսեց :

Եթէ Քրիստոս կարողացաւ իւր ընտրեալ վկայներն կատարեալապէս համոզել որ ինքն կենդանի է, բնական էր որ նոքա այն ինչ որ իւրեանց աչքովն տեսան ու քննեցին եւ իւրեանց ձեռներովն չօշափեցին, աշխարհի քարոզէին : Սա իսկ էր իւրեանց առաքելութեան նպատակն : Բայց խորքան հաստատուն եւ անսահման իւրեանց համոզումն ու հաւատն այն բանի վերայ զոր նոքա կը քարոզէին. արդեօք աշխարհ կը հաւատարմո՞ւն նոցա : — Տեսնենք հիմա Քրիստոս ինչպէս հոգաց որ իւր առաքելոց վկայութիւնն մեզ արժանաւատ լինին եւ մենք ստիպուինք հաւատալ : Նախ, Քրիստոս իւր աշակերտներ կատարեալապէս համոզեց որ ինքն յարեաւ : Արդ մեր վկայք այնպիսիներ չեն որ միամտութեամբ զայն կը հաւատան զոր ինչ կը քարոզեն. այլ այնպիսիք՝ որ զոր ինչ կը քարոզեն՝ կաստեալ եւ անսահման հաստատութեամբ զիսեւ : Այլ եւս զի՞նչ է մեզ պիտոյ նորանց հաւատ ընծայելու համար : Երկրորդ, Քրիստոս ոչ թէ մին կամ երկու այսպիսի վկայներ մեզ յուղարկած է, այլ մի բազմութիւն վկայից : Հիմա գիտեմք որ այսքան մարդոց քարոզութիւնն ու հաւատութիւնն ոչ թէ միայն պատրանք չէր, այլ ոչ եւս կարէր յառաջագոյն խորհրդակցութեամբ եւ միջինուածոյ բան լինել : Ի՞նչպէս էին կարող այսքան մարդիկ միանալ այնպիսի միաձայնութեամբ, այնպիսի կամակորութեամբ եւ այնքան հալածանաց եւ տանջանաց հանդէպ՝ սապէս զարմանալի եւ ծաղրալի սուտ չինել եւ տարածել : — Երրորդ, Քրիստոս իւր Յարութիւնն՝ Առաքելոց ձեռքով յանուն իւր կատարած հրաշագործութիւններովն որ յաջաբազմաց տեղի ունեցան, հաստատեց : Առաքեալք՝ երբ զմեռեալս յարուցանեն, կոյրերն, կաղերն ու հիւանդներն կը բժշկեն, չեն աւեր : Ընկ (մեր իշխանութեամբն ու արդարութեամբն) այս մարդը կ'ազատենք, այլ յանուն խաչեցելոյն եւ յարուցելոյն գործեմ զայս ամենայն : Այլ եւս ի՞նչ կ'ուզենք, եթէ այս բոլորն իւրեանց ժամանակակիցների հաստատութեամբն տեղի ունեցաւ : — Զորրորդ պատճառ եւս կայ որոյ վասն պար-

արմբ Առաքելաց վկայութիւնն միամիտ եւ զուարթ հաւա-
 տով ընդունել: Առաքեալք՝ Քրիստոսի Յարութիւնն ոչ թէ
 իրրեւ գաղտնիք միայն մտերիմ ծանօթների մէջ պահեցին,
 այլ բացարձակապէս ամէն տեղ, ՚ի սկզբանէ մինչեւ ՚ի վերջ
 իւրեանց քարոզութեան գլխաւոր նիւթն ու հիմն էր Յարու-
 թիւն Քրիստոսի: Սակայն այս իւրեանց քարոզութեան հա-
 մար ոչ թէ միայն ոչ մի շահ կամ օգուտ ընկալան, ոչ թէ
 միայն հանգիստ կեանք չանցուցին եւ պատուոյ եւ առաւե-
 լութեան արժանի չեղան, այլ ընդ հակառակն, ժողովրդա-
 նոցներէն արտաքսեցան, լլկանք եւ տառապանք կրեցին,
 երկրէ երկիր հալածական եղան, թագաւորաց եւ իշխանաց
 առջեւ դատապարտեցան եւ մեռան: Այս բոլորն կրեցին եւ
 հանդուրժեցին այն վարդապետութեան համար թէ Յիսուս
 իրրեւ Մեսիա եւ Փրկիչ յարեաւ ՚ի մեռելոց: Ամէն նեղու-
 թեանց ու թշուառութեանց համբերեցին եւ զայս վարդա-
 պետութիւն անվեհեր եւ աներկիւղ քարոզեցին. եւ իւրեանց
 գլխաւոր պարտականութիւն համարեցին Յարութեան լոյսն
 տարածել յամենայն ծագս երկրի: Սորանից աւելի ի՞նչ կու-
 վենք. միթէ կարելի՞ է սորանից աւելին սպասել մեր վկայ-
 ներէն: Նորանց վկայութիւնն այնքան արժանահաւատ է որ
 եթէ չը հաւատայինք, Առաքելոց եւ առաջին քրիստոնէից
 կեանքն մեզ համար մի կատարեալ առեղծուած կը լինէր:
 Եթէ մէկը մեզ այս բանը քարոզէ, որ ինքն յառաջ կ'երկ-
 մաւոր եւ չէր հաւատալ, այլ յետոյ փորձով իսկ ճշմարտու-
 թիւնն ստուգեց, թերեւս բարեյօժարութիւն ունենանք
 նորա օրինակին հետեւելու. Քրիստոսի աշակերտաց մէջ այս-
 պէս մէկը կար: Թովմաս մի յերկոտասանիցն էր: Իւր տասն
 աշակերտակիցներն իրեն կը վկայէին հաւաստեալ թէ Տէրն
 կենդանի է. կը վկայէին որ զինքն տեսած եւ իրեն հետ խօ-
 սած էին, եւ նա որպէս յառաջ ժամանակի կերաւ, խմեց
 իւրեանց հետ: Թովմաս իւր ընկերները լաւ կը ճանաչէր,
 քաջ գիտեր որ նոքա հաւատարիմ իսրայէլացիք են եւ սուտ
 չեն խօսեր: Ի՞նչ է կարող նորանց վկայութեան դէմ առար-
 կել. արդեօք պէտք չէ՞ր որ խոյն հաւատար: Սակայն եւ
 այնու ամենայնիւ ոչ հաւատաց: Այսպիսի տնհաւատալի բան

ամենեւին չը պիտի հաւատայ, ով որ վկայողն լինի: Նա միայն իւր աչերին ու ձեռներին կը վստահի. «Եթէ ոչ տեսից 'ի ձեռս նորա զնշան բեւեռացն, եւ արկից զմատուենս իմ 'ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս իմ 'ի կողս նորա, ոչ հաւատամ»: Նա ամենեւին չը պիտի հաւատայ. նախ պիտի տեսնի եւ իմանայ, եւ միայն այն ժամանակ այդպիսի անհնարին բան հաւատայ երբոր այլ եւս ճար չը կայ: Եւ ահա ժամանակն հասաւ: Տէրն մերձեցաւ եւ ասէ. «Թովմաս, բեր զմատուենս քո եւ արկ այսր եւ տես զձեռս իմ, եւ բեր զձեռն քո եւ մխեաց 'ի կողս իմ, եւ մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»: Թովմաս կը մօտենայ եւ ամօթիւք եւ յուզմամբ կ'աղաղակէ. «Տէր իմ եւ Աստուած իմ»: Յայսմհետէ անհաւատն անացեալ Առաքելոց նման հաւատացեալ եղաւ: Արդ մենք ի՞նչ ունիմք ասելու: Եթէ պարտական եմք միւս Առաքելոց հաւատ ընծայել, ապա զորչափ առաւել թովմասի վկայութիւնն արժանի է հաւատալոյ:

Միայն քանի չարաթ գկնի Յարութեան հազարաւոր անձինք տարբեր ազգօք եւ լեզուօք ժողովեցան եւ մեծացուցին զգլխս հաւատացելոց: Սոքա ինչո՞ւ մկրտուեցան. ինչո՞ւ հաւատացին. ինչո՞ւ համար զանձինս իւրեանց մատնեցին 'ի չարչարանս եւ 'ի կտտանս մահու: Յարուցելոյն անուամբն մկրտեցան: Նոքա հաւատացին 'ի նա՝ յարութեան յուսովն, զոր անդրանիկ պտուղն ննջեցելոց կ'ընծայէ աշխարհի: Այն բոլոր զոհողութիւններն անհիմն չէին կարող լինել. քանզի ո՞վ կը զոհէ իւր կալուածներն ու ազատութիւնն, իւր առտնին խաղաղութիւնն ու պատիւն առանց հաստատուն հիմանց վերայ կառուցեալ յուսոյ եւ հաւատոյ: Հազարք հազարաց որք Յարութեան քարոզչաց եւ վկայից բերնէն լսեցին Աւետարանի պատգամն զինքեանս նուիրեցին 'ի ծառայութիւն Յարուցելոյն: Նոյն հաւատն մեր նախնիք դարուց 'ի դարս անխարդախ եւ անիփոփա քարոզեցին մինչեւ մեզ հասուցին: Եկեղեցական պատմութիւնն մի ահագին չղթայ է որ այս բոլոր ազգերն ու դարերն միմեանց հետ կը կապէ եւ կը հասցնէ այն վկայութեան թէ ուրբ Առաքեալք՝ զայն ամենայն զոր մենք նորանց մասին կը կարգումք, իրօք եւ ճշմար-

տապէս տեսին եւ իւրեանց ձեռքերովն չօշափեցին եւ իւրանց բերանովն վկայեցին եւ իւրեանց արեամբն նորա ճըշմարտութիւնն կնքեցին :

Ապա եկայք , եղբարք , մեր հաւատն միացնենք մեր նախնեաց դարաւոր հաւատոյն հետ եւ սիրով եւ ամենայն վստահութեամբ խոստովանիմք Յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց . Ալէլուիա : Զոր սպանին Հրէայք , ահա այսօր կեայ եւ թագաւորէ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից :

Քրիստոսի յարութեան փաստերն այստեղ չեն վերջանար : Դիցուք թէ նա սպանեցաւ իւր թշնամեաց ձեռքովն եւ մեռեալ մնաց , այսինքն յարութիւն չառեց . բայց իւր մնացեալ բոլոր պատմութիւնն ի՞նչ անենք : Նորա ծնունդն՝ զինքն իբրեւ Որդի Աստուծոյ կը նշանակէ . իւր արտաքին գործերն կը ցուցանեն որ նա իշխանութիւն ունէր 'ի վերայ բնութեան եւ հոգւոց , 'ի վերայ կենաց եւ մահու . իւր որոշ դիտաւորութիւնն եւ կենաց նպատակն էր՝ աշխարհ բերել զճշմարտութիւն , զչնորհս եւ զմխիթարութիւն ի Հօրէ : Բայց երբ մի խայտառակ մահուամբ մեռաւ , ի՞նչպէս ենք կարող այն ամէնը մեկնել զոր մարդիկ լուան եւ տեսին : Ուրեմն պիտի այդ բոլորն իբրեւ սկիզբն առանց վերջաւորութեան , իբրեւ խաղ ոչինչ բանի համար , իբրեւ մի անպատճառ խաբեբայութիւն եւ պատրանք համարենք : Քանզի եթէ նա ոչ յարեաւ 'ի մեռելոց , իւր բոլոր կեանքն այլ եւս նշանակութիւն չունի եւ գմբէթի գազաթը կը պակասի : — Դարձեալ դիցուք թէ նորա Յարութեան պատմութիւնն չինուածոյ իմն էր , թէ նորա բարեկամներն ու աշակերտներն այս պատմութիւնը հնարեցին , յետոյ ի՞նչ : — Արդարեւ կասեն կենդանի է , բայց ճշմարիտն ասած նա մեռաւ , եւ թէպէտ մարդիկ կը հաւատան թէ նա կենդանի է , սակայն մեռաւ նա եւ իւր գործողութիւնն անդ 'ի մահու վերջացաւ : Արդ , ի՞նչպէս է կարող մի մեռեալ յերկինս համբառնալ , եւ ուստի է առաքումն Հոգւոյն Սրբոյ յաւուր Պէնտէկոստէի , ուստի , զինի քառանքեայ վախկոտ լուութեան եւ առանձնութեան , այն յանկարծակի փոփոխութիւնն որով սկսան Աշակերտքն լեզուս

խօսեւ եւ սքանչելիս դործել։ Ո՞ւստի այն բոլոր հրաշալի եղելութիւնք որք պատահեցան Աւետարանի քարոզչաց ձեռքովն, որպէս գրեալ իսկ է 'ի Գործս Առաքելոց։ — Քրիստոսի կեանքն առանց Յարութեան սխալ նմանի մի ահագին, հոյակապ շինուածոյ, զոր իւր տէրն մեծ ծախսով եւ հոգածութեամբ բարձրացոյց, բայց անկատար թողեց։ Ա՛յն փառաւոր կեանքն, այս խայտառակ վերջն։ Իւր կենաց բոլոր պատմութիւնը կ'ստիպուինք առ ոչինչ գրել, իբրեւ անվայելուչ Բարձրելոյն Աստուծոյ, համայն մարդկային պատմութեան մէջ զարմանալի եւ անպարագրելի երեւոյթ, եթէ այս գործոյն կատարն վերցունենք, Քրիստոսի յարութեան յաղթանակն ստենք։

(Շարունակելի)

ՏՕՆ ՉԱՏԿԻ

Թէպէտ նոր կտակարանի մէջ բացարձակապէս չի յիշուիր թէ Առաքեալք՝ քրիստոնէից համար որոշ տարեկան տօներ հաստատեցին, սակայն արտաքին զօրաւոր փաստեր կան որ Առաքեալք ինքեանք ամի ամի Զատիկ տօնն կը կատարէին։ Արդէն 'ի Գործս Առաքելոց շատ տեղ կը կարդամք որ հաստատեցեալք կիւրակէ օրն սուրբ կը պահէին 'ի յիշատակ Յարութեան Տեառն։ Եթէ այս տօնն այնքան կարեւոր կը համարուէր որ ամէն կիւրակէ կը տօնուէր, որչափ առաւել արէտք էր նորա տարեդարձն կատարել, երբ երրայական Պասեքն Փրկչի կենարար տնօրէնութիւնը նորանց կը մտաբերէր։ Հին եկեղեցւոյ պատմութիւնն վկայ է այսմ։ Երկրորդ դարու սկիզբն նոյն իսկ Զատիկ տօնի առթիւ վէճեր տեղի ունեցան, եւ այս վիճարանութեանց մէջ՝ առաքելական աւանդութեանց վկայութիւնն արդէն կարեւոր կը սեպուէր։ Այս վիճարանութեանց պատմութիւնն փոքր ինչ քննենք։

Զատիկն կամ Պասեքն ⁽¹⁾ Հրէից ազգի ծննդեան տօնն էր,

(1) Առձեռն Բառարանն Զատիկ կը մեկնէ « Տօն զատուելու Իսրայէլացւոց յեգիպտոսէ »։ Պատք, Երայական պատախ կամ քաղղեական պատ-

ի յիշատակ այն վերջին հարուածոյն զոր Աստուած բերեց եգիպտացւոց վերայ, որով Հրէայք վերջապէս ազատեցան եգիպտական գերութենէն: Այս տօնը Նիսան ⁽¹⁾ ամսոյ 14ին կը կատարէին Հրէայք: Քրիստոսի մատնութիւնն ու մահն այս տօնի ժամանակ պատահեց: Բայց որովհետեւ երկու Աւետարանչաց պատմութիւններն երեւին տարբերել ՚ի միմեանց, սմին իրի հին եկեղեցւոյ մէջ երկու տարբեր սովորութիւններ երեւեցան Զատիկ պահելու մէջ, եւ երկուսն եւս վիճաբանութեանց մէջ միշտ ջանացին Նոր կտակարանի եւ առաքելական աւանդութեանց վկայութիւնը բերել ՚ի հաստատութիւն իւրաքանչիւր ծիսի: Փոքր Ասիոյ հաւատացեալք (մանաւանդ Զմիւռնիոյ եկեղեցին) Յովհաննէս Աւետարանչի աւանդութեան կը յենուին. եւ ըստ այսմ Քրիստոսի չարչարանաց յիշատակն Հրէից Պասեքի հետ կը պահէին, այսինքն գարնան հաւասարագիշերոյ լուսնի առաջին լրման օրն, որ է 14 Նիսան, առանց խտրութեան աւուր, Աւագ Ուրբաթն՝ 14ին եւ երկու օր զինի՝ Յարութեան տօնը կը կատարէին, թէ՛ կիւրակէ եւ թէ՛ շաբաթամէջ լինէր: Սորա հակառակն էր Արեւմտեայց սովորութիւնն, որք Քրիստոսի մահուան յիշատակն միշտ ուրբաթ օր եւ Յարութեանն՝ կիւրակէ պահեցին: Եթէ Նիսան 14ն ուրբաթ օր պատահէր, նոյն օրն Հրէից Պասեքի հետ Աւագ Ուրբաթ կը կատարէին եւ հետեւեալ կիւրակէ՝ Զատիկի Յարութեան տօն կը լինէր: Այլ եթէ Նիսան 14ն Ուրբաթ օր չը պատահէր, թուականիս մօտակայ Ուրբաթն Աւագ Ուրբաթ կը տօնուէր, որպէս եւ այժմ: Այս անհամաձայնութեան մասին Հռովմայ Անիկէտ եպիսկոպոսի եւ Զմիւռնիոյ Պօղիկարալ եպիսկոպոսի

խա բառն է որ կը նշանակէ անցանել: Պասեքի հաստատութիւն այն ժամանակ եղաւ երբ Աստուած եգիպտացւոց վերայ վերջին հարուածը բերեց: Ելք ԺԲ. 23.—«Եւ անցե՛ Տէր հարկանել զեգիպտացիսդ. եւ տեսնիցէ՛ զարիւնն որ ՚ի վերայ բարաւորին եւ ՚ի վերայ երկուց սեմոց, եւ զանց առնիցէ՛ Տէր զղործն, եւ ոչ տայցէ՛ թոյլ ստատակցին մօանել ՚ի տուն՝ ձեռն եւ հարկանել:» Ասի է պատե՛ կամ պատխա բառի նշանակութիւն:

(1) Նիսան Հրէից եկեղեցական տարւոյ առաջին ամիսն էր որ Ապրիլի լուսնի ծագման՝ սկիզբն կ'առնէր եւ նոյն ամսոյ 14ն միշտ լուսնի առաջին լրումն զինի գարնանային հաւասարագիշերոյն կը համարուէր:

միջեւ խօսք եղաւ : Անիկէտ եպիսկոպոս՝ Հռովմայ եկեղեցւոյ առաքելական ականդութիւնն բերեց 'ի հաստատութիւն Արեւմտեայց սովորութեան , մինչդեռ Պօղիկարպ , որ Սրբոյն Յովհաննու աշակերտ էր , իւր զօրաւոր ականդութիւնն կը բերէր 'ի նպաստ փոքր Ասիոյ սովորութեան ⁽²⁾ : Թէպէտեւ չը կարողացան համաձայնիլ՝ չ'ուղեցին այս տարբերութիւնն երկպառակութեան եւ հերձման պատճառ չինիլ . ուստի Անիկէտ հրաւիրեց զՊօղիկարպ որ Հռովմայ եկեղեցւոյն մէջ Պատարագ մատուցանէ 'ի նշան աննուազ սիրոյ եւ հաշտութեան : Այս տարբերութիւնն 'ի մէջ Փոքուն Ասիոյ եւ Արեւմտեայց 100 տարի աւելի տեւեց , երբեմն տարաձայնութեան եւ հերձմանց պատճառ լինելով , երբեմն խոհեմագոյն հովուապետաց շնորհիւ 'ի սէր խաղաղութեան անտես առնելով , մինչեւ Նիկիոյ ժողովոյ յամի 325 վերջնական որոշում տուեց , որով Արեւմտեայք յաղթական հանդիսացան : Նիկիոյ Հարք սահմանեցին զտօն Սուրբ Զատիկին կատարել յաւուր Կիւրակէի որ գայ զհետ չորեքտասաներորդ աւուր լուսնոյ յետ գարնանային հաւասարութեան աւուրց : Աղեքսանդրիոյ եպիսկոպոսն պատուէր ստացաւ որ ամէն ամիս Զատիկ օրն որոշէ եւ եկեղեցեաց հաղորդէ , որովհետեւ յայնմ ժամանակի աստղաբանական գիտութիւնք Աղեքսանդրիոյ մէջ ամենէն աւելի կը փայլէին : Որպէս զի Հրէից Պատեքի հետ Աւագ Ուրբաթ չը կատարեն , եթէ լուսնի 14ն Ուրբաթ օր պատահէր (յորժամ Հրէայք անհրաժեշտ իւրեանց Պատեքն կը կատարէին) , Աղեքսանդրիոյ եպիսկոպոսունք իւրեանց չըջարերականով Զատիկը մէկ շաբաթ կը յետաձգէին : Այս սովորութիւն , թէպէտ Նիկիական ժողովոյ որոշում չէր , ընդհանրապէս ընդունուեց :

Այս որոշում առաւել կամ նուազ համաձայնութեամբ շարունակուեց մինչեւ 1582 թուականն , երբ Հռովմայ Պապ Գրիգոր ԺԳ Նիկիոյ ժողովոյ Յուլիական կոչուած չըջանի թերութիւնն տեսնելով , մի նոր չըջան հաստատեց աստղագիտական հաշիվ աւելի ճիշդ եւ յարմար : Այս է նոր տոմարն զոր Եւրոպացիք մեծաւ մասամբ գործ կ'ածեն : Ա-

(2) Եւսեբիոս , Եկեղեցական Պատմութիւն , Դպր. Դ. Գլ. ԺԴ :

ռանց աստղաբանական մանրամասնութեանց մէջ մտնելու, բաւական լիցի աստ միայն յիշել որ տումարի նորոգումն հարկաւոր էր, եւ եթէ Արեւելեան ազգեր, ընդ որս եւ Հայք, զայդ նորոգութիւն չ'ընդունեցին, պատճառն աւելի եկեղեցական խտրութիւնն էր քան թէ փոփոխութեան իրաւացի կամ անիրաւ լինելն: Բայց զարմանալին այն էր որ Բողոքականք, որ յայնմ ժամանակի մեզնից աւելի հակառակ էին Հռովմայ եկեղեցւոյ ունեցութեանց, առանց երկար բողոքարկութեան ընդունեցին զայս տումար: Եթէ մենք Հայերս զայս նորոգութիւն չ'ընդունելով աստղաբանական գիտութեանց իրաւունք չենք տալ, գէթ մեր ազգի պահպանողական աւանդութեանց հաստատուն կը մնամք՝ հին եկեղեցւոյ կարգադրութիւններն անփոփոխ եւ անլթար պահելով: Քանզի յիրաւի փոքր ինչ անսովոր համարձակութիւն է հարկաւոր Նիկիոյ Սուրբ Ժողովոյ կարգադրութիւնը փոխելու համար, թէպէտ այդ կարգադրութիւն մի թերութիւն եւս ունենայ: մանաւանդ երբ թերութիւնն առ այժմ այնքան չնչին է եւ ո եւ է անպատեհութեան առիթ չի կարող լինել:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԶԱՏԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ. ԵՁ.

Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր
Քեզ աւետիք խընդունեան հարսն ի յերկրէ եկեղեցի.

Օրհնեալ ի ծայն ցնծութեան զԱստուած քո Սիրովն,
Այսօր անճառ լոյսն 'ի լուսոյ լուսաւորեաց զմանկունքս քո.
Լուսաւորեալ՝ երուսաղէմ, քանզի յարեալ լոյս քո Քրիստոս.

Օրհնեալ 'ի ծայն ցնծութեան զԱստուած քո Սիրովն
Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեակ լուսովն
Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան, յարուցեալն ի մեռելոց Քրիստոս:

Օրհնեալ 'ի ծայն ցնծութեան զԱստուած քո Արիւն:

Անցեալ շաբաթ տեսանք ⁽¹⁾ որ Քրիստոսի պաշտօնն եւ իւր փրկագործութեան գլխաւոր առարկայն էր «զմարդն բարձրացունել առ Աստուած» եւ նորա կամքն Աստուծոյ կամայ հետ վերստին յօդել եւ միաւորել: Մեր կենաց մէջ այսպիսի միաւորութեան լ'նչ առաւել գեղեցիկ եւ յարմար

(1) Տես եկեղեցի Հայաստանեաց էջ 405.

սլատկեր կայ քան թէ ամուսնութեան կապն: Քրիստոս ինքն այս համեմատութիւնն արեց, եւ արդ մեր Յարութեան բանաստեղծն Քրիստոսի գծագիրն իւր ճարտար մատներովն եւ հայկական զուարթ գոյներով մեզ կը ներկայացնէ:

Քրիստոսի արեամբ փրկեալ մարդիկ կը կազմեն Եկեղեցի, եւ մեր բանաստեղծն այս եկեղեցւոյն հետ կը խօսի: Չնա՛ եւս խառնել բանաստեղծական անուամբ Սիովն⁽¹⁾ կը կոչէ քանզի Երուսաղէմի կեդրոնն զայս անուն կը կրէր, եւ կը յորդորէ զնա օրհնել զԱստուած՝ ի ձայն ցնծութեան:

1. Ո՛վ Սիովն, ո՛վ Եկեղեցի որ Քրիստոսի հաւատացելոյ միութեան անունն ես եւ մարդկային ազգն յանձին քում կը բարձրացնես առ Քրիստոս. իբրեւ Հարսն՝ Փեսայ ես ընտրել քեզ զՔրիստոս. ահաւասիկ ես, Հայ երգողս, քեզ ուրախութեան եւ խնդութեան լուր (աւետիք) կը բերեմ, Այր քո, անմահ Փեսայն որ ՚ի յերկնից էջ յերկիր՝ այսօր յարեաւ ՚ի մեռելոց: «Հարսն ՚ի յերկրի» եւ ոչ ՚ի յերկրի, ասելով՝ կ'ուզէ նշանակել թէ՛ ինչպէս որ հարսն կ'երթայ իւր մարդի տունը, նոյնպէս Եկեղեցին, այսինքն բազմութիւն հաւատացելոց, միանալով Աստուծոյ հետ կը բարձրացնէ զազգ մարդկան եւ կը բերէ ՚ի տուն ուրախութեան երկնաւոր Փեսային: 2. Սիովն իբրեւ մայր կը նկարագրէ: Ո՛վ սուրբ Եկեղեցի, ո՛վ Հարսն երկնաւոր Փեսային, քոյ միութեան պտուղն ընդ Քրիստոս՝ քո մանկունքն են, այն միլիոնաւոր Քրիստոնեայքն են որ քոյ երկնային Փեսայի լուսովն լուսաւորեցան: Արդարեւ մեծ էր այն լոյսն որ եղեւ քեզ Աստուած եւ Փեսայ միանգամայն: Ուստի ուրախ լեր եւ խնդա «Քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս»: 3. Աշխարհ՝ խաւարի մէջ կը գողգոթէր մինչեւ աստուածային լոյսն ՚ի ձեռն Քրիստոսի եկն եւ ծագեաց լոյս գիւտութեան. այս լոյսն էր Քրիստոս որ ինքն իսկ ասաց «Ես եմ լոյս աշխարհի», եւ ՚ի ձեռն Քրիստոսի Աստուած կատարելապէս յայտնեցաւ⁽²⁾ Ահա այս լոյսը քո յարուցեալ Փեսայն կը ծագէ քեզ. ուստի արի՛ եւ «Օրհնեա ՚ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիովն»:

(1) Լեռն Սիովն երուսղէմ քաղաքի այն մասն է ուր ՚ի հնումն Դաւիթ թագաւորի պալատը կը գտնուէր եւ քաղաքի կեդրոնն կամ գլխաւոր թաղն էր: Այժմ հայր մեծաւ մասամբ այս թաղումն կը բնակին ուր իսկեւ Ս. Յակովբայ հոյակապ վանքն է:

(2) «Երրեակ լոյս» այստեղ թերեւս Ս. Երրորդութեան վերաբերի եթէ

Ն Ա Մ Ա Կ

Առ . . . Խմբագիր Եկեղեցի Հայաստանեայց շաքարական հանդիսի,

Ձեր հանդիսի 6^{րդ} թուոյն մէջ զՁաքարիայ որդւոյ Յովիդայայ խօսելով՝ զայն կը համարիք իբր վերջին մարգարէն, զոր Հրեայք սպանին:

Սակայն ներուի ինձ ասել որ այս Ձաքարիա՝ իբր քահանայապետ՝ իւր Հօր յաջորդելով 834ին Ն. Ք. զՔրիստոս, առ Յովէլաւ մարգարէիւ, քարկոծմամբ սպանաւ հրամանաւ ապերախտին Յովասու, յանդիմանելուն համար թագաւորը, պալատականները եւ ժողովուրդը, որ խոտորած էին յԱստուծոյ: Մինչդեռ Ձաքարիա մարգարէ, որոյ մահը չը յիշեր պատմութիւնը, չուրջ 300 տարիներ յետոյ, Չօրաբաբելի հետ դառնալով ՚ի Բաբելոնէ, սկսաւ մարգարէանալ 520ին Ն. Ք. զՔրիստոս եւ Աօգէ մարգարէին հետ միաբան կը խրախուսէր զժողովուրդն ՚ի գլուխ հանել տաճարին ընդհատեալ շինութիւնը:

Չայս ՚ի գիտութիւն Ձեր սիրելութեան հալորդագրելով՝ քաջայոյս եմք թէ կը փութաք Ձեր յառաջիկայ թուոյն միջոցաւ ուղղել սոյն պատմական վրիպակը յօգուտ եւ ՚ի շինութիւն ընթերցողաց:

Որով մնամ աղօթանուէր

Կ. Պօլիս, 14 Ապրիլ 1888

Վ. Վ. ՅԱԿՈՎԲԵԱՆ

Ընթերցողն պիտի տեսնի (Եկեղ. Հայաս. Լջ 92) որ մենք զՁաքարիա որդի Յովիդայայ՝ Ձաքարիայ մարգարէութեան հեղինակի հետ չը չփոթեցինք որպէս Արժ. Թղթակիցս կարծել թուի. քանզի մենք արդէն « Բ. Մնացորդաց ԻԲ. 21 » նշանակեցինք ուր նորա մահուան պարագայքն յիշատակեալ կան: Ուրեմն խօսքն միայն այն է թէ արժան իցէ զՁաքարիա որդի Յովիդայայ մարգարէ կոչել թէ ոչ: Մարգարէ բառն

այսպէս է՝ զգուշանալի է երեակ յոյս իբրեւ բացոյցայիչ Քրիստոսի չը համարել, քանզի յետոյ պէտք կը լինի ասել երեակ յոյսն յարեալ ՚ի մեռելոց: Այս մասին բանասիրաց հետազոտութիւնը զոգոճեամբ կ'ընդունուին:

ոչ թէ միայն կանխախօս կը նշանակէ այլ նաեւ Աստուծոյ պատգամն քարոզող: Օրինակի համար Մովսիսի պատմական գորուածներն եսայեայ մարգարէութեանց ամենեւին նման չեն , սակայն եւ այնպէս Մովսէս իրրեւ մարգարէ կը համարուի : Դրիստոս կը խոստանայ առաքել « մարգարէս եւ իմաստունս եւ զպիրս » , այսինքն Աւետարանի քարոզիչներ : Անշուշտ իրաւունք ունի Արթ. Թղթակիցս մարգարէ բառի այսպիսի ընդարձակ գործածութեան դէմ առարկել: Բայց մեր նպատակն էր Մատթ. ԻԳ. 34 եւ 37 տանց մէջ նոյն բառի ընդարձակ գործածութիւնն լուսաբանել եւ Աւետարանի ոճոյն համաձայնի :

Խմբ. Ե. Հ.

ԱՌ ԹՂԹԱԿԻՑ Ս

Պ. Թ. — 1. Քլիատուլթեան մասին առ այժմ մտադրութեամբ կարդալ Գործք Առ. ԺԵ. 6 — 35, եւ Պողոսի թուղթի առ Գաղատացիս լաւ ուսումնասիրէ։ 2. Երբ Գրիստոս փարիսեցւոց եւ դպրաց կ'առնէ. «Մորոք եւ կոյրք եւնայդ ծայրայեղ բարկութեան, կամ լաւ եւս ստել, ատելութեան նշան չէ։ Գրիստոս ախրա՛յ սրտմտեալ եւ ոչ թէ ասեղութեամբ բորբոքեալ զփարիսեցիս եւ զդպիրս կը յանդիմանէ, որք իրօք յիմար եւ հոգւով կոյր էին, եւ հետեւաբար Գրիստոսի բարկութիւնն ոչ ծայրայեղ է եւ ոչ անսեղի։ Երբ Պետրոս սրով Մաղքոսի ականջն կտրեց, նորա բարկութիւն, թէպէտեւ արդար, չափազանցութեան հասաւ. քանզի եթէ ոստիկանութեան հրամանն լինի մէկ մարդ բռնելու համար, արդեօք իրաւունք կունենայ այդ մարդու բարեկամն ոստիկանութեան ծառայն վիրաւորել եւ երկրի կառավարութեան ընդդիմանալ, Բնական էր որ Գրիստոս իւր սկզբանց համեմատ — թէ «Տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ» — Պետրոսի յանդգնութիւնն կը յանդիմանէր։ «Որ առնուցուսուր սրով անկանի» մի եբրայական առած էր որով Գրիստոս յարմար տեսաւ Պողոսի համարձակութիւնն յանդիմանել, եւ ոչ թէ մի ընդհանուր օրէնք հաստատել։ — 3. Մեզ յայտնի չէ, դժուար է այս բանի մասին որոշ գաղափար յայտնել։

Վ. — Ս. Մարդ արդէն աստ յայսմ աշխարհի կարող է

մի գաղափար կազմել թէ ինքն արքայութիւն կամ զժողովրդի երթայ: Կանոնը շատ դիւրին է. Աստուծոյ պատուիրաններն գիտես, զայնս զգուշութեամբ պահէ եւ ամէն օր զինքդ քննէ եւ ասա. արդեօք այսօր Աստուծոյ կամաց համեմատ վարուեցայ, իմ պարտականութիւնս առ Աստուած եւ առ ընկերս կատարեցի: Եթէ զանցառութիւններ արած կը լինիս, խնդրէ յԱստուծոյ զթողութիւն: Թէպէտեւ մեր մարդկային սահմանաւորեալ միտքէն վեր է հասկանալ թէ « Օթեւանք արդարոց » ինչպէս բան է, բայց անշուշտ արդարն զկնի մահուան իւր վարձու գիտակցութիւնն կունենայ: Քրիստոս 'ի վերայ խաչին աւազակին ասաց «Այսօր իցես ընդ իս ի դրախտին» որով յայտ է թէ զկնի մահու անկենդան եւ անզգայ չենք լինել: — Բ. Այս հարցիդ թէ «Իւր սիրելիները կը գտնե՞մ» կ'ուզեմ այո՛ պատասխանել, թէպէտ եւ Ա. Գրոց վկայութիւն չեմ կարող բերել 'ի հաստատութիւն այսմ բանի, բայց այսքանը յայտ է որ արդարոց ուրախութիւնն կ'ստանայ եւ անպակաս պիտի չիմի, եւ եթէ երկնային ուրախութեանդ կատարելութեան համար հարկաւոր լինի որ սիրելիներդ եւս գտնես, անշուշտ Աստուած իւր անչափ ողորմութեամբն այդ շնորհքն եւս քեզ ցոյց կուտայ որպէս զի ուրախութիւնդ անպակաս լինի, միայն թէ դու քո վարքովն ու բարքովն եւ քրիստոսասէր կեանք վարելովն զինքդ արժանի առնես երկնային երջանկութեան:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Հանդիսիս եռամեայ զինն է 'ի Տանկասան 7 դահեկան, թղթատար 10 դահեկան, եւ ՀԱՏԸ 20 ՓԱՐԱՅ, Եւրոպա, 2½ Ֆր. Հնդկասան, 1½ Ռուբլի. Պարսկասան, 3 Ղոն. Ռուսասան 1 Ռուբլի:

Վնարումն պէտք է որ միշտ կանխիկ լինի:

Նամակ կամ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագրութիւն Եկեղեցի Հայաստանեայց Հանդիսի, Չամբաճըլար, Յակոբեան խան, Պաղասլեան Տպարան:

Խմբագիր

ԹՈՐՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՍԼԵԱՆ

Չամբաճըլար, Յակոբեան խան, Թիւ 40, 44, 42, 43

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک رخصتیہ طبع اولشدر